ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

<<12>> հունիս 2024թ

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
հ/հ 900438000318

«Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԼԵՎՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ
/Հասցե՝ք.Երևան, Դեղատան փողոց, 10շենք, 6 բն.1/

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/««Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ ծածկագրով պայմանագիրը միակողմանի և մասնակի լուծելու մասին»/

02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման պայմանագիր՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների՝ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքները, մասնավորապես, կոշիկի քսուք,հեղուկ օճառ/լվացվելու/,տակդիր,շամպուն,ախտահանիչ, մաքրող միջոց լվացարանների և լոգարանների համար, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը

պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես՝ պայմանագրի առարկան՝1.1կետը/:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի պատասխանատու անձի կողմից կազմվել են հայտեր,արձանագրություն և դրանցով սահմանվել են ժամկետներ՝ տեխնիկական բնութագրով սահմանված տակդիրը մատակարարելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն փաստական հանգամանքը , որ մինչև օրս Ձեր կողմից չեն պահպանվում պայմանագրով սահմանված էական պայմանները, մասնավորապես,ապրանքներից տակդիրը չի մատակարարվում սահմանված քանակով և առկա է Ձեր կողմից վերադասին հասցեագրված դիմում առ այն , որ չեք կարողանում տեխնիկական բնութագրին համապատասխան ձևով և քանակով տակդիրը մատակարարել,ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ԱՍՀՆ ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ» ծածկագրով կնքված պայմանագրի պահանջներից, անհրաժեշտություն է առաջացել միակողմանի և մասնակի լուծելու 02.02.2024թվականին /««Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ ծածկագրով պայմանագիրը:

Կից ներկայացվում է պայմանագիրը միակողմ և մասնակի լուծելու մասին որոշման օրինակը «2»թերթից:

Հարգանքով՝

Տնօրեն Հ. Ղալասանյան

Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60
էլ.հասցե՝ kharberd-mankatun@mail.ru

Ararat Marz, Nor Kharberd
☎ 0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60
e-mail: kharberd-mankatun@mail.ru